

ՀԱՄԱՆՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

Քիմիա

**Չիլաջյան Հ. Ա., Գրիգորյան Կ. Ռ. Յուլի շիճուկային ալբումինի ջերմային
բնակիչումը դիմեթիլսուլֆօքսիդի ջրային լուծույթներում կալիումի յոդիոդի
ներկայությամբ** էջ. 3–5

Էլեկտրոնային կլանման սպեկտրաչափական եղանակով ուսումնասիրվել է ցովի շիճուկային ալբումինի (ՑԸԱ) ջերմային բնակիչումը դիմեթիլսուլֆօքսիդ (ԴՍՍՕ) ջրային լուծույթներում կալիումի յոդիոդի ներկայությամբ: Յույց է տրվել, որ սպիտակուցի ջերմային կայունությունը կախված է միջավայրի կառուցվածքը կայունացնող ԴՍՍՕ-ցով, և ավելի բույլ տոլվատացված յոդիդ իոնների միջավայրի կառուցվածքը քանոյող մրցակցային փոխազդեցություններից: ՑԸԱ-ն առավել կայուն է ԴՍՍՕ-ի փոքր (5 ծավալային %), քան ավելի մեծ (10–25 ծավալային %) կոնցենտրացիաների դեպքում:

**Հարուրյումյան Լ. Ռ. Ջերմաստիճանի ազդեցությունը ոչիոնային մակերևութային
ակտիվ նյութ հերսադեցիլ պոլի[օքսիթրիլեն(25)] սպիրտի միցելագոյացման
վրա ամինաթթուների ջրային լուծույթներում** էջ. 6–11

Ուսումնասիրվել է ամինաթթուների (L-օլիցին, L-ալանին, L-ֆենիլ-
ալանին, L-սերին, L-ասպարագինեթթու, L-լիզին, L-լեյցին) ազդեցությունը
ոչիոնային մակերևութային ակտիվ նյութ հերսադեցիլպոլի[օքսիթրիլեն(25)]
(C₁₆A₂₅) սպիրտի միցելագոյացման կրիտիկական կոնցենտրացիայի (ՄԿԿ) և
միցելագոյացման թերմոդինամիկայի վրա ջրային լուծույթներում տարբեր
ջերմաստիճաններում: Յույց է տրված, որ ամինաթթուների կոնցենտրացիա-
ների մեծացմամբ C₁₆A₂₅ ՄԿԿ-ն աճում է, իսկ ջերմաստիճանի մեծացմամբ
այն նվազում է:

Պետրոսյան Վ. Ա. Պլնձի միգրացիան ջուր-հատակային տիղմ համակարգում
էջ. 12–15

Աշխատանքում հետազոտվել է պլնձի միգրացիան ջուր-հատակային
տիղմ համակարգում, պլնձի պարունակության և pH-ի, պլնձի և լուծված
թթվածնի միջև գծային կախվածությունը: Հետազոտման առարկան է ընտրվել

Հայաստանի ամենամեծ և կարևորագույն գետերից մեկը՝ Հրազդան գետը: Նմուշները վերցվել են Հրազդանի ավազանի 6 դիտակնետերից: Վերցվել է ջրի և հատակային տիղմի 66 նմուշ 2012–2013 թթ. ժամանակահատվածում: Ծանր մետաղների պարունակության աճային արդյունքները ցույց են տվել, որ ոչ մի կետում սահմանային բույլատրելի կոնցենտրացիայի գերազանցում չի նկատվել: Մաքենատիկական հաշվարկներով ստացվել են կորելացիոն գործակիցներ, ինչպես թH-ի, այնպես էլ լուծված թթվածնի համար: Հաստատվել է թH-ի և լուծված թթվածնի ազդեցությունը պղնձի միգրացիայի վրա ջուրհատակային տիղմ համակարգում:

Վարդամյան Լ. Ռ. Բուսահումքի թուրմերի հակաօքսիդի ակտիվությունը էջ. 16–22

Կումոլի մոդելային օքսիդացման ռեակցիայի օրինակի վրա կինետիկ եղանակով հետազոտվել է տասներկու բույսերի պտույների ու տերևների թուրմերի հակաօքսիդի (ՀՕ) հատկությունները: Հետազոտված թուրմերում որոշվել է ինչպես հակաօքսիդի նյութերի քանակությունը, այնպես էլ նրանց հակաօքսիդի ակտիվությունը (ՀՕՍ): Հաստատվել է, որ հետազոտված թուրմերից ամենաշատ քանակությամբ ՀՕ պարունակվում է երկամյա իշխուտի ($1 \text{ mg } 2.93 \cdot 10^{-5} \text{ mol/l}$) և հավակատարի ($1.15 \cdot 10^{-5} \text{ mol/l}$) տերևների թուրմերում: Ամենամեծ ՀՕՍ են դրսորում ռուբեկիայի ($3.21 \cdot 10^5$), դդումի ($2.93 \cdot 10^5$), բազմամյա թելուկի ($2.70 \cdot 10^5$) և շրջահյուս հունականի ($2.58 \cdot 10^5 \text{ mol/l}$) տերևների թուրմերը: Ցույց է տրված, որ ՀՕՍ են ցուցաբերում նաև թուրմերում առկա ելային ՀՕ օքսիդացման արգասիքները (Q): Բացահայտվել է ռեակցիաների արագությունների հաստատումների համար $\text{RO}_2^{\bullet} + \text{InH} \xrightarrow{k_7} \text{ROOH} + \text{In}^{\bullet}$ և $\text{RO}_2^{\bullet} + Q \xrightarrow{k_{71}} Q^{\bullet} + \text{ROOH}$ նախաեքապոնենտի ($\lg A$) և ակտիվացման էներգիայի (E) միջև կորելյացիոն կախվածությունը: Հաստատվել է, որ k_7 հաստատումնի համար $\lg A = 4.9 + 0.64 E$, իսկ k_{71} -ի համար $\lg A = 2.6 + 0.64 E$:

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Գրիգորյան Կ. Մ., Հակոբյան Լ. Լ. Ջրի ակտիվության, թH-ի և պահեստավորման գերմաստիճանի ազդեցությունը միցելիալ սնկերով չորացրած խաղողի աղտոտվածության աստիճանի վրա էջ. 23–28

Խաղողի վերամշակումից ստացված մքերքներում միցելիալ սնկերի աճը պայմանավորված է ֆիզիկական, քիմիական և կենսաբանական գործոններով: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ջրի ակտիվության բարձր արժեքների դեպքում նկատվում է միկրոմիցեներով չորացրած խաղողի նմուշների աղտոտվածության բարձր աստիճան: Նկատվում է նաև թH-ի և միցելիալ սնկերով չորացրած խաղողի աղտոտվածության աստիճանի միջև որոշակի կորելյացիա: Աշխատանքում ուսումնասիրվել է նաև պահեստավոր-

ման ընթացքում ջերմասիճանային պայմանների ազդեցությունը հայկական արտադրության չորացրած խաղողի միկրոֆլուտայի և միցելիալ սնկերով աղոստվածության աստիճանի վրա: Պարզվել է, որ չորացրած խաղողի պահեատավորումը 4°C-ից ցածր ջերմաստիճանի պայմաններում նպաստում է միցելիալ սնկերով նրա աղոստվածության աստիճանի որոշակիորեն նվազմանը:

**Անտոնյան Ա. Պ. ԴՆԹ-ի հետ մեթիեն կապույտի և Hoechst 33258-ի կապման
մեխանիզմները**

Էջ. 29–34

Աշխատանքում ներկայացված են ԴՆԹ-ի հետ մեթիեն կապույտի (ՄԿ) և Hoechst 33258-ի (H33258) փոխազդեցության տվյալները: Ցույց է տրված, որ լուծույթի 0.002 M իոնական ուժի դեպքում ՄԿ-ը կապվում է երկշղթա ԴՆԹ-ի հետ երեք եղանակներով՝ ինտերկալյացիոն, կիսահնտերկայացիոն և էլեկտրաստատիկ: Պարզվել է, որ լուծույթի ավելի բարձր իոնական ուժերի դեպքում ՄԿ-ի ամրողական ինտերկալյացիան դառնում է թերմոդինամիկորեն ոչ ձեռնտու: Ցույց է տրված, որ H33258-ը ԴՆԹ-ի հետ կապվում է երկու եղանակներով՝ ուժեղ և բույլ: Հայտնաբերվել է, որ H33258-ի կապման ուժեղ եղանակը կախված է լուծույթի իոնական ուժից:

**Հայրապետյան Ն. Ն., Խաչատրյան Ա. Հ., Հովհաննեսյան Գ. Ա. Առնետի տարրեր
օրգաններում աղենոզինեգամինազի հետազոտումը**

Էջ. 35–38

Հողմածում ցույց է տրվել, որ առնետի օրգանների հոմոգեն պրեպարատների աղենոզինեգամինազն ենթարկվում է ինակտիվացման երկվալենտ մետաղների իոնների ազդեցությամբ (Ca^{2+} , Cu^{2+} , Mg^{2+}), սակայն տարրեր զգայունություն է ցուցաբերում տվյալ մետաղների նկատմամբ: Առավելագույն ճնշող ազդեցությունը գրանցվել է Cu^{2+} իոնների ներկայությամբ:

**Չարոյան Ա. Գ., Անտոնյան Ա. Ա., Հարությունյան Հ. Ա., Սարդանյան Ա. Ա.
Ամիլոդիային բետա պեպտիդների ագրեգացման ընկճումը և դեպքեգացման
նպաստումը բուսական պատրաստուկներով**

Էջ. 39–46

Ամիլոդիային ԱԲ (1-40) և ԱԲ (1-42) պեպտիդների ագրեգացումը համարվում է Ալցիեմերի հիվանդության պատճառներից մեկը: Այս աշխատանքում ուսումնասիրվել է որոշ բուսական պատրաստուկների ազդեցությունն այդ պեպտիդների ագրեգացման վրա, որը գնահատվել է թիոֆավին Տ-պարունակող նմուշների ֆլուորեսցենցիայի հիման վրա: Ներկայացվել է որոշ պատրաստուկների ունակությունը ընկճել ԱԲ-ների ագրեգացումը և քայլայել նախորդը ստեղծված ագրեգատները: Որոշ դեպքերում գնահատվել են այդ գործընթացներում IC₅₀ արժեքները: Զեղոք բերված տվյալների հիման վրա խորհուրդ է տրվում՝ ա) ռիսկի խմբի անձանց հաճախակի օգտագործել այդ բույսերը; բ) հետազոտված բուրմերի կլինիկական գնահատում որպես նեյրոդեգեներացիայի կանխման և/կամ բուժման միջոցների աղբյուր:

Դուիլյան Լ. Ա. թ-քրոմֆենացիլ բրոմիդով արգելակված ֆոսֆոլիպազ A2 պարունակող *Montivipera raddei* և *Macrovipera lebetina obtusa* թույների մեմբրանատրոպ ազդեցությունը

Էջ. 47–52

Աշխատանքում ուսումնասիրված է, թ-քրոմֆենացիլ բրոմիդով արգելակված, ֆոսֆոլիպազ A2-ի (PLA2) պարունակող՝ *Montivipera raddei* (MR) և *Macrovipera lebetina obtusa* (MLO) թույների ազդեցությունը, ANS (8-անիլո-1-նաֆթալինսուլֆատային թթվի) ֆլուորեսցենտ գոնդի միջոցով վիզուալացված, հսկա միալամել վեզիկուլների (ՀՄՎ) վրա: Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ երկու թույներն էլ, նույնիսկ առանց PLA2-ի ակտիվության, ունեն նկատելի մեմբրանոտրոպիկ ազդեցություն արհեստական քաղանքների վրա, սակայն այդ ազդեցությունն այլ կերպ է դրսնորվում: Սա թույլ է տալիս ենթադրել, որ հետազոտվող օճի թույները կարող են պարունակել PLA2-ի տարրեր իզոմերներ: